

Տ. ՊՕՂՈՍ ՔԷՆՅ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ (1972–1977)

Ղխարհի տարբեր ծագերում սփռուած մեր համայնքների պատմութիւնը կարօտ է համապարփակ ուսումնասիրութեան: Իբրեւ առաջին քայլ անհրաժեշտ է հաւաքել, համակարգել եւ հնարատրութեան դէպքում հետագայ հետազոտողների համար հրատարակել համայնքային, ծխական եւ խորհուրդների դիւանական նիւթերն ու փաստաթղթերը, որոնց ուսումնասիրութիւնը լոյս կսփռի կարեւոր կամ կննդոտ հարցերի վրայ: Ստորեւ ներկայացնում ենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Բուրգասի Ս. Խաչ տաճարի եկեղեցական վարչութեան վաւերագրերը, որ պահուում են եկեղեցուն կից նորաբաց թանգարանային մասնաշէնքում: Վաւերագիրը 21 x 14 սմ 20 թերթից բաղկացած ձեռագիր արձանագրութիւն է, որ թուայնացրել ենք 2015–2020 թթ. Ս. Խաչ եկեղեցում հոգեւոր սպասաւորութեան ժամանակ:

Եկեղեցական վարչութիւն Պուրկազ

Ծանօթութիւն: Մասնաւոր կարեւորութեամբ կը յիշատակենք ու կարձանագրենք Ս. Խաչ եկեղեցւոյ վերանորոգումը, որ տեղի ունեցած է 1972–1977 տարեշրջանի ընթացքին, եկեղեցական վարչութեան սիրեցեալ անդամներու օրով:

[Անդամներ]: Գամբեր Շիրին, Յակոբ Գազանճեան, Միհրան Գալֆայեան, Մկրտիչ Վըլըխեան, Գէորգ Թօփուզեան, Գէորգ Տանիէլեան, Մկրտիչ Թովմասեան, Եղիսաբէթ Գաբրիէլեան, Եւա Տէր-Թադէոսեան:

Զեկոյցը, որ քովի էջին վրայ պիտի տեսնէք, պատրաստուած ու կարդացուած է 24.04.1977, տեղւոյս եկեղեցական վարչութեան ատենապետ Գամէր Շիրինի¹ կողմէ եկեղեցւոյ աւարտումէ յետոյ, ներկայութեամբ՝ Ռոմանիոյ եւ Պուլկարիոյ առաջնորդ, Գեր. Տ. Տիրայր [արք.] եպիսկոպոս Մարտիրկեանի² ու հոծ բազմութեան ներկայութեան:

¹ 1976–1980 թթ. Բուրգասի Ս. Խաչ եկեղեցու, թաղական խորհրդի եւ եկեղեցական վարչութեան ատենապետ:

² 1960–2010 թթ. Բուլղարիոյ եւ Ռումինիոյ թեմի առաջնորդ:

Գերաշնորհ Տ. Տիրայր [արք.] եպիսկոպոս Մարտիրեան, արժանապատիւ Տ. Գարեգին խաչակիր քահանայ Տիւլկերեան³, պատուարժան Թեմական խորհրդոյ ներկայացուցիչ, եւ Վառնայի, Սլիվէնի, Թաթար Բազարճիկի եկեղեցական վարչութեան ներկայացուցիչներ, յարգելի ընկերուհիներ եւ ընկերներ.

Հայրենիքէ դուրս, սփիւռքի մէջ, մեր ազգային դիմագիծը, մեր ազգային գոյութիւնը պահելը, ոչ թէ միայն անառարկելի իրողութիւն՝ այլ հրամայական պահանջք մըն է:

Հակառակ, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ արտագաղթած է իր հայրենիքէն ու բնակավայրէն, գաղթականի ցուպը ձեռքը առած՝ դէպի օտար հորիզոններ ապաստան մը գտնելու, սակայն եւ այնպէս, ուր որ հաստատուած է, շնորհիւ իր աշխատասիրութեան ու ուշիմութեան, բարօր կեանք մը ստեղծելէ յետոյ օտարութեան մէջ, չայլասերուելու համար գիտակցութիւնը ունեցած եւ անհրաժեշտութիւն զգացած, որպէս հրամայական պահանջք կառուցանելու, իր ազգային զոյգ հաստատութիւնները՝

Եկեղեցին—դպրոցը

Դպրոցը մեր մտքին ու լոյսին վառարանն է, իսկ եկեղեցին, հայ ժողովուրդին հաւատքին տունը: Մեր եկեղեցիները ոչ միայն աղօթատեղիներ եղած են անցեալի մէջ, այլ նաեւ հայ ժողովուրդին դաստիարակիչը:

Մեր սքեմաւոր հոգեւորականները սերունդներ դաստիարակած գիր ու գրականութիւն սորվեցուցած են հայ ժողովուրդին:

Այդ ազգային զոյգ հաստատութիւնները հայապահպանման տեսակէտով դարեր շարունակ սփիւռքի մէջ իսկական հայկական օճախներ եղած են: Այդ ուղղութեամբ մենք յաճախ թերթերուն մէջ կարդացած ենք:

Սփիւռքի մէջ ամեն հայ համայնք ունեցած է իր դպրոցը ու եկեղեցին, անշուշտ Պուրկազն ալ որպէս սփիւռքի մէջ գտնուող համայնք չէր կարելի անտարբեր մնալ միւս հայ համայնքներէ:

1968-ին Պուրկազի քաղաքին առաջին անգամուան բլանին (նախագիծ) մէջ մեր եկեղեցւոյ վրայ դեղին նշանակուած էր, կը նշանակեր, թէ փլցուելու ենթակայ [է]: Իսկ աւելի ուշ՝ կանաչ, որ կարելի է համարել եկեղեցւոյ գոյութիւնը խնդրական:

³ Տ. Գարեգին քհնյ. Տիւլկերեան — ծնւ. 1912 թ. Բուլղարիա՝ Շումեն: 1962—1982 թթ. եղել է Բուրգասի Ս. Խաչ եկեղեցու հոգեւոր հովիւ:

Վարչութիւնն այդ շրջանին, տեղւոյս ազգայիններէն իժ. (ճարտարագէտ) ընկ. Հրանդ Պաքլայեանին⁴ դիմեց, որպէսզի երթայ, բլանը աչքէ անցնէ:

Ընկեր Պաքլայեան ամենայն յօժարութեամբ եւ պատրաստակամութեամբ յանձն առաւ ուսումնասիրել բլանը (նախագիծ) ու եկաւ վարչութեանս հաղորդեց, թէ աշակուրջ ըլլանք, կրնայ ապագային վտանգ մը սպառնայ եկեղեցւոյ գոյութեան վրայ:

Ընկերոջ կողմէ տրուած ահազանգին վրայ, վարչութիւնն իրար անցաւ եկեղեցւոյ գոյութիւնը վտանգէ փրկելու համար, մասնաւոր նիստ գումարեց եւ հրաւիրեց տեղւոյս ազգայիններէն, իրաւագէտ ընկ. Գարեգին Մանուէլեան⁵ եւ իժ. ընկ. Հրանդ Պաքլայեան խորհրդակցեցաւ անոնց հետ, միջոցներ որոնեց կանխելու համար հաւանական երեւցող այդ ահաւոր վտանգը: Միակ միջոցը էր պատմական փաստերու տուեալ գտնել եկեղեցւոյ հնութիւնը հաստատող: Առաջարկուեցաւ անմիջապէս Փլովտիւէն յայտնի բանասէր ընկ. Ներսէս Գասապեան⁶ Պուրկազ հրաւիրել, որպէսզի պատմական տուեալներ տայ մեզի եկեղեցւոյ հնութիւնը հաստատող:



Հրանդ Պաքլայեան

⁴ Հրանդ Պաքլայեան — ծնւ. 1906 թ. 2 Նոյեմբեր Բուրգաս: 1933 թ. ուսումնառութեան է մեկնել Բելգիա եւ Գենտի համալսարանում ուսանել ճարտարագիտութիւն: Վերադառնալով Բուրգաս իր մեծ համբավի շնորհիւ կարողանում է ներգրավւել ոչ միայն Բուրգաս քաղաքի, այլեւ ողջ տարածաշրջանի համար մշակութային եւ ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող շինարարական եւ վերակառուցման ծրագրերում: Նրա վերահսկողութեան ներքոյ կառուցուել են բնակելի եւ հասարակական նշանակութեան բազմաթիւ շէնքեր, ինչպէս նաեւ մի քանի կամուրջ: 1997 թ. իր ունեցուածքը կտակում է Բուրգասի հայկական գերեզմանատանը մատուցելու: Մահացել է 2000 թ. մարտի 6-ին, թաղուել իր իսկ միջոցներով կառուցուած գերեզմանատան մատուռի յետնամասում: 2007 թ. դեկտեմբեր 6-ին Բուրգասի քաղաքապետարանի կողմից յետմահու պարգեւատրուել է պատուաւոր քաղաքացու կոչումով:


⁵ Գարեգին Մանուէլեան — Բուրգասի հայ համայնքի կարկառուն ներկայացուցիչ, իրաւագէտ, ում հետեւողական եւ տքնաջան աշխատանքի շնորհիւ համակարգուեցին եւ ի մի բերուեցին պատմական բոլոր վկայութիւններն ու փաստաթղթերը, որոնք վկայում էին, որ Ս. Խաչ եկեղեցին, ճարտարապետական շինութիւն լինելուց բացի, նաեւ պատմական յուշարձան է, ինչը եւ կարեւորագոյն դեր խաղաց եկեղեցին քանդման վտանգից ազատելու գործում:

⁶ Ներսէս Գասապեան — Փլովդիւհայ մեծանուն աղբյուրագէտ եւ բանասէր: Նրա աշխատանքների շնորհիւ այսօր մեզ են հասել բազմաթիւ տեղեկութիւններ Բուլղարիայում եղած հայկական ձեռագրերի մասին, որոնց կարող ենք ծանօթանալ «Հանդէս ամսօրեայ»-ի 1938 թ. տպուած 1—8 համարներում: Ներսէս Գասապեանի կարեւոր միւս աշխատութիւնն է «Բուլղարիայում հրատարակուած հայկական գրքերի մատենագիտութիւն» ձեռնարկը, որ-

Ընկ. Ներսէս Գասապեան, վարչութեանս խնդրանքին ընդառաջելով, մտաբերելով խնդրոյ կարեւորութիւնը, Պուրկազ եկաւ ու մեզի կարեւոր նիւթեր տրամադրեց Պուրկազի հայ գաղութին, մասնաւորաբար՝ եկեղեցւոյ մասին, պատմական փաստեր ու տուեալներ եկեղեցւոյ հնութիւնը հաստատող, որոնք բոլորն ալ նկարուեցան մասնաւոր նկարչական գործիքով:

Այստեղ մասնաւոր կարեւորութեամբ պէտք է արձանագրել, փաստաբան ընկ. Գարեգին Մանուէլեանի յամառ աշխատանքը, ինքնաբոլիս նուիրումով ու մեծ սիրով իրաւագիտական բոլոր հմտութիւնները գործադրեց եւ իր վրայ վերցուց եկեղեցւոյ հնութիւնը հաստատող բոլոր փաստերը, որոնք ընկ. Գասապեանի կողմէ տրամադրուած էր, ինքն ալ առանձին պրպտումներ կատարեց օտար աղբիւրներէ, եւ հաստատուեցաւ, թէ իսկապէս մեր եկեղեցին դեռ 1808 թուականէն շատ առաջ ալ գոյութիւն ունեցած է: Բայց մենք որպէս հաստատական թիւ կառնինք 1808 թուականը:

Ահա ներկայացուած փաստերէն մէկ քանինք: Հոգեւորական եւ պատմագէտ Մինաս Բժշկեան, 424 էջնոց գիրք մը հրատարակած է որուն մէջ կյիշէ թէ, իբր ինք 1808-ին ճամբորդութիւն մը կատարած է եւ այցելած է Փլովտիւ, Ռուսէ, Շումէն, եւ Պուրկազ քաղաքները, այդ գրքին 212-րդ էջին մէջ կը գրէ, թէ Պուրկազ այցելած ժամանակ 1808-ին 20 հայ ընտանիք եւ եկեղեցի մըն ալ գոյութիւն ունեցած է Ս. Աստուածածին անունով: Նոյնիսկ Ժէ. դարու մէջ Պուրկազի մէջ հայ եկեղեցի գոյութիւն ունեցած է Մխիթարեաններէն հայ կղերական Մարտիրոս Ղրիմցի, որ 1620—1683 ապրած է եւ 1673-ին այցելած է Պուլկարիոյ հայ եկեղեցիները իր հրատարակած գիրքին մէջ կը յիշէ Բոմորիի եւ Պուրկազի մասին, տիրացու Նիկողոս անունով անձին դէմ դիտողութիւններ ունի իր եկեղեցական պարտականութիւններին մէջ թերացած ըլլալուն⁷: Ինչ որ կհաստատուի թէ՛ դեռ այդ ժամանակ իսկ հայ եկեղեցի գոյութիւն ունեցած է Պուրկազի մէջ: Դեռ Ժէ. դարուն, Մխիթարեաններու աշխարհագրական նօթեր հայ ձեռագիր-



Գարեգին Մանուէլեան

տեղ այբբենական կարգով գրուած են 1885—1989 թթ. բուլղարիայում հրատարակուած գրքերը: Այս վերջին աշխատութիւնը յօրինուել է Բուլղարերէն եւ վերահրատարակուել Փլովդիւում 2008-ին:

⁷ Առաւել մանրամասն տե՛ս Մ. Պոտուրեան, Մարտիրոս Ղրիմցի եւ իր քերթուածները, Բուխարեստ, 1924, իսկ Բուրգասի մասին՝ էջ 48—49:



ներուն մասին քաղուած, ուր կըսուի թէ Պուրկազի քաղաքին մէջ գոյութիւն ունեցած է հայ եկեղեցի եւ հայութիւն:

Սոյն ձեռագրերը թարգմանուած են ֆրանսերէնի եւ իտալերէնի:

Հետեւաբար ըստ տուեալ փաստերու հիման վրայ 1832-ին Ս. Ստեփանոս եղած է մեր եկեղեցւոյ անունը, քաղուած հին Աւետարանէն, արդէն Ս. Ստեփանոսի քարկոծումը հաստատող նկար մըն ալ ունինք առանց թուականի:

Արդէն ուսուցիչ Քենտիկեանն ալ իր յուշերուն մէջ արձանագրած է⁸, թէ Պուրկազի եկեղեցւոյ հիմնարկութեան թուականը յայտնի չէ, եւ ոչ ալ

գաղթականութեան սկզբնաւորութիւնը:

Ուսուցիչ Քենտիկեան 1895-էն մինչեւ 1901 թուականը եղած է Պուրկազի ազգային վարժարանի ուսուցիչ, անիկա ունի նօթի առած յուշեր, այդ յուշամատեանը առանձին գրքոյկի մէջ ունի գրուած, որ կը գտնուի եկեղեցական վարչութեանս արխիւին մէջ. փափաքողը կրնայ տեսնել:

Քենտիկեանի գրած յուշերուն մէջ Ս. Խաչ եկեղեցւոյ հիմնարկութեանը տօմարական արձանագրութիւնը կսկսի 1853 ապրիլ 21-ն: Գրած է նաեւ Այթօսի եւ Պուրկազի հայ համայնքներուն ընդարձակ նկարագրականը:

Ուրեմն երեք շրջաններուն զանազան անուններ կրած է մեր եկեղեցին: 1808-ին Ս. Աստուածածին: 1832-ին Ս. Ստեփաննոս, իսկ 1853-ն ալ Ս. Խաչ:

Ընկ. Գարեգին Մանուէլեան, Փլովտիւբնակ բանասէր ընկ. Ներսէս Գասապեանի տրամադրած եկեղեցւոյ հնութիւնը հաստատող փաստերն եւ իր կողմէ օտար աղբիւրներէ քաղած տուեալները հաւաքելով կազմեց, ընդարձակ գրութիւն մը 8 մեծադիր էջերէ բաղկացած ու մեքենայագրուած բացատրողական գրութիւն մը, ներկայացուց եկեղեցւոյ ար-

⁸ Ինքնագրից պահպանուել է միայն վերջին էջը, իսկ բնագիրն ընդօրինակել է Բուրգասի եկեղեցական վարչութեան անդամ Գրիգոր Փոստաճեանը. թւ 1976 թ. յուն. 3: Աշխատութիւնը վերնագրուած է Մ. КЕНДИКЯН, «Бургас и Айтос, сведения 1901»: Այս ձեռագիր աշխատութիւնը բաւականաչափ տեղեկութիւններ է պարունակում բուրգասահայութեան կեանքի մասին, ինչը առանձին ուսումնասիրութեան հետաքրքիր նիւթ կարող է հանդիսանալ:

տաքին ու ներքին մասերն ալ նկարահանել տալով կցեց այդ գրութեան տեղույս քաղաքապետարանը ներկայացուց առ ի վաւերացում: Այս բոլորը առանց արդիւնքի մնացին: Ստիպուած եղաւ նոյն ոգւով, նոյն բացատրութեամբ գրութիւն մը եւս երկրորդ անգամ ըլլալով ներկայացուց, դժբախտաբար ան ալ նոյն ճակատագրին արժանացաւ:

Այս անգամ առանց յուսահատուելու եւ իր յոյսը ու հաւատքը կորսնցնելու ջանք չխնայեց եկեղեցւոյ գոյութիւնը ապահովելու համար, որ իր սրտին այնքան մեծ ու նուիրական էր, երրորդ մը պատրաստեց ու այս անգամ Սօֆիա մշակուցի հնութեան պետական հեղինակաւոր պատմական հաստատութեան ներկայացուց, բոլոր նկարներով, փաստերով, տուեալներով ու բացատրութիւններով ընդարձակ գրութիւն մը, հաստատելու համար, թէ մեր եկեղեցին իսկապէս հնութիւն մը կը ներկայացնէ, որպէսզի զերծ մնայ ապագային փլցուելու վտանգէն:

Ահա՛ պատմական կարեւոր փաստերէն մին հնութիւնը հաստատող:

Դեռ անցեալ դարուն 1877—1878-ին Ռուս-թրքական պատերազմին ժամանակ իբր Ռուսական բանակը յաղթական դուրս եկաւ ու ազատագրեց Պուլկար ժողովուրդը թրքական գերիշխանութենէն, այս առթիւ, Պուրկազի հայ համայնքը իր երախտագիտական զգացումները յայտնած ըլլալու համար մասնաւոր գոհաբանական աղօթք կատարած է ի պատիւ ռուս զինուորներու յաղթանակին ու եղբայրական Պուլկար ժողովուրդին ազատագրման:

Այդ արարողութեան ներկայ է եղած անձնապէս կեներալ Լերմօնթով իր շքախումբով:

Կեներալ Լերմօնթով ապրած է մեր հին ազգային վարժարանին քովի Բիբերովի տունը, ուր յուշատախտակ մըն ալ գոյութիւն ունի:

Մենք այս մանրամասն վկայութիւնները քաղած ենք տեղույս ազգայիններէն՝ ընկ. Թագւոր Մանուկեանէ⁹ եւ ընկ. Նղսաբէթ Գաբրիէլեանէ¹⁰, որոնց ծնողները այս շրջանին ժամանակակիցներ եղած են այդ օրը եկեղեցին ու իրենց զաւակներուն պատմած են:

Ծան. Եկեղ. Վարչութեան. Այստեղ ուրախութեամբ պէտք է արձանագրել, թէ ընկ. Գաբրիէլ Մանուկեանին տարած տքնաջան աշխատանքները յաջողութեամբ պսակուեցան:

⁹ Եկեղեցական վարչութեան անդամ:

¹⁰ Եկեղեցական վարչութեան անդամ:



Երրորդ անգամ տրուած գրութիւնը, որ բոլոր մանրամասնութեամբ տրուած էր Սօֆիայի մշակոյթի հնութեան պետական պատմական հաստատութեան, սոյն հիմնարկութեան կողմէ ստուգուեցաւ եւ հաստատուեցաւ, թէ իսկապէս իրականութեան կը համապատասխանի տրուած խնդրագիրը եւ վաւերացուեցաւ 7/VI/1970 բրոթօքօլ 40:

Այդ աշխատանքները լրանալէ յետոյ, 16/VI/1972-ին 1833 թուահամարով տեղույս քաղաքապետարանէն նամակ մը ստացանք որուն մէջ կը հրահանգուէր վարչութեանս հետեւեալը: Եկեղեցւոյ գոյութիւնը պահելու համար եկեղեցին իր ներկայ տհաճ վիճակէն դուրս բերել ու արտաքին երեւոյթին ձեւաւորում մը տալ, գեղեցկացնել որպէսզի քսան հարկանի «Պալքան թուրիսթ» շքեղ հիւրանոցին կից ներտաշնակ ձեւ մը ստանայ:

Վարչութիւնս սոյն նամակը ստանալուն պէս անմիջապէս նիստի հրաւիրեց իժ. ընկ. Հրանդ Պաքլայեան եւ խնդրեց անկէ իր օժանդա-

Подписката Ехисапет Агоп Каприелян кореняк Вургавия
родена през 1803 година в гр.Вургас.

Спомнам си че в нашата къща често се споменавахе от покойният ми дядо Хаджи Торос Демиржибашиян който дълги години е бил член на Арменското църковно настоятелство-Вургас, че при освобождението на България генерал Лермонтов е живял в близост до нашата църква.

Тогавна независимо от това че арменците са били малко хора но те са били много радостни че заедно с българите са се освободили от турското иго. По този случай църковното настоятелство специален църковен обряд и панахида извършва в настоящата църква за падналите руски и български воители.

Генерал Лермонтов е бил специално поканен за тази панахида. Свещеника на църквата държал реч с която благодарил на руския род и воители за показаната храброст при освобождението на страната. Генерал Лермонтов остава много доволен от арменското малцинство.

Подписала: /Ехисапет Агоп Каприелян/


Верно, с оригинала на арменски език,


Арменско църковно настоятелство

Председател:

Секретар:

[Signatures]





**կոթիւնը՝ բացատրելէ յետոյ
նամակին բովանդակութիւնը:**

**Իր ղեկավարութեան տակ
իր ձեռքովը յանձնէ որեւէ պե-
տական հաստատութեան շի-
նութիւնը կատարելու համար:**

**Ընկ. Պաքլայեան անմիջա-
պէս սիրով ու պատրաստակա-
մութեամբ խոստացաւ սրտանց զբաղիլ այդ գործով:**

Վարչութիւնս ընկերոջ կողքին նշանակեց վարչութեանս անդամնե-
րէն ընկերներ Միհրան Գալֆայեան եւ Մկրտիչ Վըլնեան որպէս օգնա-
կաններ ու գործէն հասկցողներ, հետաքրքրուին ու մօտեն հոգան շինա-
րարական աշխատանքներուն ու յետոյ զեկուցանեն ընկ. Պաքլայեանին
տարուած աշխատանքներուն մասին:

Վերոյիշեալ ընկերները սիրալոժար ընդունեցին իրենց օժանդակու-
թիւնը բերել, նուիրական ու ազգային գործ մը համարելով: Այստեղ կար-
ժէ յիշել նկարիչ ընկ. Գէորգ Սարաֆեանի¹¹ աշխատանքը, առանց նիւթա-
կան ակնկալութեան ազգասիրաբար, եկեղեցւոյ դուրսի եւ ներսի մասե-
րը նկարեց, որոնք կը բաղկանային 8—10 մեծ նկարներէ:



¹¹ Հայ ազգային գործիչ: Կեանքի վերջին տարիներին Բուրգասում հրատարակել է «Հայեր» վերտառութեամբ ամսաթերթը: Ծառտարագէտ Հրանդ Պաքլայեանի մահուանից յետոյ որոշ ժամանակ եղել է Պաքլայեան հիմնադրամի ղեկավար:

Ընկ. Պաքլայեան եկեղեցւոյ ներսի ու դուրսի նկարահանուած նկարներուն կցեց նաեւ գրութիւն մը եւ ինք անձամբ տարաւ Սօֆիա Սօֆրօէքթ պետական հաստատութեան ու յանձնեց անոնց որպէսզի անոնք կատարեն եկեղեցւոյ ձեւաւորման շինութիւնը:

Ամիսներ հոն մնալէ յետոյ ետ վերադարձուցին, առարկելով, թէ շատ զբաղած են նորակառոյց պանդոկի շինութեամբ:

Այս անգամ թեմական խորհրդոյ յարգելի ատենապետ ընկ. Օննիկ Ասլանեանին¹² դիմուեցաւ, որպէսզի անոր միջոցաւ դիմում կատարել, կրկին նոյն հաստատութեան: Հակառակ ընկ. Ասլանեանին ջանքերուն չաջողուեցաւ, եւ այդպիսով ամիսներ սահեցան պարապի:

Ի վերջոյ ընկ. Պաքլայեան օգտագործելով իր անհատական կապերը, դիմեց տեղւոյ մշակոյթի հնութեան պետական հաստատութեան ու անոնց յանձնեց եկեղեցւոյ նորոգութիւնը:

Այս ուղղութեամբ նախնական աշխատանքները տարուեցան յիշեալ հաստատութեան կողմէ, այստեղ ալ բաւական երկար ժամանակ կորսնցուցինք, մինչեւ որ եկեղեցւոյ յատակագծերը պատրաստուեցան:

Վերջապէս սկսաւ աշխատանքները առաջ տարուիլ ու եկեղեցւոյ տուրսի քարապատումը տեղի ունեցաւ, սակայն տարուած աշխատանքները որակաւոր չէին եւ ընկ. Պաքլայեան տժգոհ մնաց ու հաշիւներուն մէջ ալ աւելորդ գրիչներ նկատեց եւ դադրեցուց աշխատանքները:

Այս դրութեան մէջ ստիպուած եղաւ անհատ շինարար վարպետներ գտնել ու անոնց յանձնեց շինութիւնը:

Այդ անհատ վարպետներն ալ իրենց ազատ ժամերուն, շաբաթ կամ կիրակի օրերը պիտի կարողանային գալ աշխատել. այսպէսով յապաղեցաւ շինարարութիւնը: Մեր յիշողութեան պէտք չէ վրիպեցնինք 1959-ին ընկ. Պաքլայեան ծառայութիւն մը եւս ըրաւ ազգին. դուրսի երբեմնի փայտէ զանգակատունը պեթոնով վերաշինեց հայկական գեղեցիկ տեսքով, վերջերս եկեղեցւոյ վեներտիկեան շարուածքի քարերով սալարկման համար 500 լեւա կը պահանջէր քաղաքապետութիւնը եկեղեցական վարչութիւնէս, շնորհիւ ընկ. Պաքլայեանի կապերուն, զերծ մնացինք այդ գումարի վճարումէ:

¹² Բուլղարիայի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, իր ղեկավարման ընթացքին Հայկական Եկեղեցին ունեցել է ծաղկման երկարամեայ շրջան: Օննիկ Ասլանեանին ազգասէր եւ նուիրական ծառայութեան համար 1978 թ. յունուարի 14-ին, ծննդեան 80-ամեակի կապակցութեամբ, Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Ա.-ն օրհնութեան կոնդակ է տուել: Մանրամասն տե՛ս «Էջմիածին», 1987, Բ., էջ 62—63:

Յարգելի՛ ներկաներ, չեմ կարծեր թէ իր համեստութիւնը վիրաւորած ըլլամ, եթէ աւելցնեմ թէ՝ Պուրկազի հայ համայնքը բախտաւոր է, որ ընկ. Պաքլայեանի նման ազգասէր, ազնիւ հայ ճարտարապետ մը ունի իր ծոցին մէջ:

Մեծ է վաստակը ընկերոջ, հակառակ իր զբաղումներուն ժամանակ գտաւ հետաքրքրուելու ազգին գործով 3—4 տարի անտրտունջ աշխատեցաւ առանց որեւէ նիւթական ակնկալութեան, շինարարութեան ընթացքին ծագած բոլոր խոչընդոտներուն տուրք տուաւ առանց դոյզն ինչ յուսահատելու, ի վերջոյ հասաւ իր նպատակին, մեր եկեղեցւոյ ձեւաւորման ընդհանուր աշխատանքներուն մարմին տուաւ արժանի շուքն ու բարեզարդման փառաւոր տեսքը ապահովեց օտար անցորդ դիտողներուն հիացումը առնելու աստիճան:

Փառք ու պատիւ իրեն: Մեր շինարարական աշխատանքներուն իր գնահատելի օժանդակութիւնը բերաւ նաեւ՝ Կարօ Արամեան մեզի շարունակ շինանիւթ հայթայթեց, մեզի համար շատ դժուար պիտի ըլլար այդպիսի պակասաւոր կարեւոր նիւթեր ժամանակին ապահովել, եթէ ան իր օժանդակութիւնը բերած չըլլար:

Նոյնպէս ընկ. Շաւարշ Փափազեան եւ ընկ. Ալիս Թահթագրանեան իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերին թեհնիքական աշխատանքներուն սատարելով <...> (անընթեռնելի) շինարարական աշխատանքներուն: Յարգելի՛ ներկաներ, այստեղ մասնաւոր յիշատակութեան արժանի են եկեղեցական վարչութեան անձնուէր անդամներ ընկ. Մկրտիչ Վրլլրեանի, եւ Միհրան Գալֆայեանի տարած տքնաջան աշխատանքները շինարարութեան տեւողութեան ընթացքին:

Առանց այդ ազնիւ ընկերներու աջակցութեան ոչ թէ դժուար, այլ չպիտի կարողանայինք գլուխ հանել շինարարութեան գործը միայն Պաքլայեանի անձով:

Անոնց օժանդակութիւնը օրհնութիւն մը եղաւ եւ սատարեցին ընդհանուր շինարարական աշխատանքներու յաջողութեան:

Տիրին չէր 3—4 տարի ամբողջ օր իրենց անձնական գործէն աւելի հոգ տարին, մօտէն կը հսկէին ընդհանուր տարուած աշխատանքներուն, եկեղեցւոյ շուրջը դարձան պաղին, հովին, ցուրտին եւ աշխատաւորներու սիրտ հարցնել, հոս հոն վազել, աշխատաւորները փնտրել, որոնք շատ անգամ կիսատ թողնելով՝ գործի չէին գար ժամանակին, պարզապէս հիւանդացան այդ մարդիկը: Բացի ատկէ, շինարարութեան համար


պէտք եղած նիւթերու հայթաթելու ծանրութիւնը եւ անոնք ժամանակին իրենց տեղը հասցնելու մատակարարութիւնն ալ իրենց վրայ ինկած էր, նոյնիսկ տեղին համեմատ ալ բեռնակրութիւն ալ ըրին։ Անոնց տարած անձնուէր ծանր աշխատանքը, ոչ թէ միայն գնահատելի՝ այլ նոյնիսկ ծափահարելի է։

Եկեղեցւոյ վերանորոգման գործով հոգատարութիւն ցոյց տուաւ պատուարժան թեմական խորհրդոյ ժրաջան ատենապետ ընկ. Օննիկ Ասլանեան կոջնատան գմբեթին համար մօտաւոր 500 քիլ. անագ (պախրը) ուղարկեց Սօֆիայէն ու բացի ատկէ եկեղեցւոյ վերանորոգման համար նիւթով օգնելու ջանք թափեց։

Դեռ անցեալ տարի, կրօնից նախարարութեան կից եկեղեցիներու օգնելու կօմիտէի պետ ընկ. Միլեվին հետ Պուրկազ եկաւ, ընկ. Միլեվ մասնաւոր ժամադրութիւն ունէր տեղւոյս օկրիժէն կօմիտէի քարտուղարին հետ, որը խոստացաւ 6000 լեւա նպաստ մը տրամադրել մեր եկեղեցւոյ շինութեան քանի մը ամսուան ընթացքին, սակայն, հակառակ մեր հաշուապահ ընկ. Մկրտիչ Մելքոնեանի յաճախակի դիմումներուն, խոստացուած գումարը մինչեւ այսօր չենք ստացած ու մեր բոլոր յոյսերը ի դերեւ ելան։

Այս անգամ ստիպուած եղանք ընկ. Ասլանեանին դիմում կատարել, ապա թէ ոչ կիսատ պիտի մնար շինութիւնը։ Ընկ. Ասլանեան մտնելով մեր նեղ դրութեան մէջ անմիջապէս օգնութեան հասաւ մեզի, հրահանգեց Վառնայի, Սլիվէնի, Թաթար Փազարճըքի եկեղեցական վարչութիւններուն անոնց միջոցաւ մեզի փոխանցեց 8000 լեւա փոխառութեան ձեւով, ներկայիս եկեղեցական վարչութիւնս պարտք ունի, Վառնայի, Սլիվէնի եկեղեցական վարչութիւններուն 2000 աւան լեւա, իսկ Թաթար Փազարճըքի՝ 4000 լեւա։

Աստուած մեզի, մենք ալ անոնց։ Ընդհանուր վերանորոգումը մեզի արժեց մօտ 25 000 լեւա, որուն 17 000-ը մենք ունէինք մեր գանձին մէջ։ Վերջացնելէ առաջ, պարտք կը համարեմ խորին շնորհակալութիւններ յայտնել Պուրկազի եկեղեցական վարչութեան կողմէ, բոլոր անոնց, որոնք որ օգտակար եղան ու զօրավիգ հանդիսացան մեզի, մեր ազգօգուտ նուիրական ձեռնարկին յաջողութեան, ըլլայ նիւթապէս, ըլլայ բարոյապէս. եւ կը մաղթենք բոլորին առողջութիւն։ Նոյնպէս շնորհակալութիւն կը յայտնենք ու առողջութիւն կը մաղթենք Պուրկազի հաւատացեալ ժողովուրդին, որ իր լուծանքով ու մեր խնայողութեամբ, 17 000 լեւա հաւաքուեցաւ տարիներուն ընթացքին, որով կարողացանք կատարել



ներկայ գեղեցիկ վերանորոգումը, որ կոթող մը պիտի հանդիսանայ եկող գացող սերունդները յիշեցնող¹³:

Վերջ

Յ. Գ. Այստեղ մասնաւոր կարեւորութեամբ եւ երախտագիտութեամբ պէտք է աւելցնել, թէ առանց Փլովտիւաբնակ ծանօթ բանասէր ընկ. Ներսէս Դասապեանի արժէքաւոր ծառայութեան դժուարաւ կարողանայինք մեր եկեղեցին փլցնելու ստույգ վտանգէ փրկել: Շնորհիւ անոր տուած բոլոր այն իրական ու պատմական փաստերուն եւ տուեալներուն մեր եկեղեցւոյ հնութիւնը հաստատող, յաջողութեան գոց դռներ բացին մեր առջեւ¹⁴:

¹³ Բուրգասի Ս. Խաչ եկեղեցու վերանորոգութեան մասին համառօտ տեղեկութիւններ տես նաեւ «Էջմիածին», 1978, Ը.—Թ., էջ 114—115:

¹⁴ Վերջում ներկայացնում ենք Բուրգասի Ս. Խաչ եկեղեցու լուսանկարները վերանորոգութեան ընթացքում, այժմէական տեսքով: